Գործ թիվ ԵԴ2/0904/02/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

09.02.2024թ. *ք. Երևան*

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի /այսուհետ՝ Դատարան/ դատավոր Տ.Ստեփանյանս, ուսումնասիրելով ԱՁ Կարեն Սամվելի Բատիկյանի կողմից ներկայացված հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ

ԱՁ Կարեն Սամվելի Բատիկյանը 01.02.2024թ. հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ Ապարանի համայնքապետարանի, երրորդ անձ՝ «Լեգիտիմուս» ՍՊ ընկերության՝ թիվ ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԳՀԽԾՁԲ-01/24 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.12.2023թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված՝ «Լեգիտիմուս» ՍՊ ընկերությանը հաղթող ճանաչելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու և նշված ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին նոր գնահատում անցկացնելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

06.02.2024թ. հայցադիմումը հանձնվել է Դատարանի դատավոր Տ. Ստեփանյանին:

Հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ և նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր չկան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

ԱՁ Կարեն Սամվելի Բատիկյանի ընդդեմ ՀՀ Ապարանի համայնքապետարանի, երրորդ անձ՝ «Լեգիտիմուս» ՍՊ ընկերության՝ թիվ ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԳՀԽԾՁԲ-01/24 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.12.2023թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված՝ «Լեգիտիմուս» ՍՊ ընկերությանը հաղթող ճանաչելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու և նշված ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին նոր գնահատում անցկացնելուն պարտավորեցնելու պահանջների մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ԴԱՏԱՎՈՐ **Տ. ՍՏԵՓԱՆՅԱՆ**